

ԱՄՆ-ում ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄՊԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ԲԱԺԻՆ
EMBASSY OF THE REPUBLIC OF ARMENIA
CONSULAR SECTION

2225 R Street, NW, Washington, DC, 20008
Tel: (202) 319-2983, Fax: (202) 319-8330

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ՝

Հ Հ Ք Ա Ղ Ա Ք Ա Ց Ի ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ի Ց
Դ ՈՒ Ր Ս Գ Ա Լ ՈՒ Կ Ա Ր Գ Ը

Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու նպատակով անհրաժեշտ է վերը նշված հասցեով ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

1. Դիմում՝ ԱՄՆ-ում ՀՀ դեսպանության հյուպատոսի անունով
2. Դիմում-հարցաթերթիկ /կցվում է/
3. Անձնագիրը և դրա պատճենը
4. 35 x 45 մմ չափսի 6 լուսանկար
5. Անուսնության վկայականը (առկայության դեպքում) և դրա պատճենը
6. Իր երեխայի ծննդյան վկայականը և դրա պատճենը
7. Ձինվորական գրքույկը կամ կցագրման վկայականը (զինապարտ քաղաքացիների, նախագորակոչային և զորակոչային տարիքի անձնաց համար)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Համաձայն «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության Օրենքի 13 հոդվածի, ՀՀ քաղաքացիությունից դուրս գալու համար անհրաժեշտ է դեսպանություն ուղարկել \$ 69 (Money Order payable to the Embassy of the Republic of Armenia): Դիմումը չբավարարվելու դեպքում վերը նշված գումարը չի վերադարձվում:
2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից դուրս գալու համար պահանջվում է ԱՄՆ իշխանությունների նախնական համաձայնությունը՝ Ձեզ Միացյալ Նահանգների քաղաքացիություն շնորհելու վերաբերյալ:
3. Կից ներկայացվող բոլոր փաստաթղթերը պետք է թարգմանված լինեն հայերեն:
4. ԱՄՆ-ում ՀՀ դեսպանությունը պատասխանատվություն չի կրում փոստային ծառայության պատճառով կորսված փաստաթղթերի համար: